պատմության» մեջ տեղ գտած թղթային միավորների վերաբերյալ. «Դրանք վավերական պատճեններ չեն իրոք գրված թղթերի, այլ հորինված են հեղինակից այն ձևով ու բովանդակությամբ, որ հեղինակի կարծիքով պետք է ունենային այդ թղթերը – եթե իրոք գրված լինեին: Մեր այժմյան հասկացողությամբ սա կեղծիք է, բայց հների մեջ սա սովորական և ընդունված կարգ էր ու մեղադրանքի չէր ենթարկվում»[4]:

Անշուշտ, տարբեր դարաշրջաններում հայ պատմիչները թղթին դիմել են տարբեր նպատակներով ու տարբեր հաճախականությամբ՝ նկատի ունենալով կոնկրետ խնդիրներ: Հայ միջնադարյան թղթի ուսումնասիրողներից Աշոտ Ալեքսանյանն այս առումով նկատում է, որ «Զարգացած ավատատիրության դարաշրջանի հայ պատմագրության մեջ նվազում է նամակային վավերագրերի հաճախակի օգտագործման երևույթը, մի բան, որ բնորոշ է վաղ ավատատիրության դարաշրջանի հայ պատմագրությանը»[5]:

Առաքել Դավրիժեցու «Գիրք պատմութեանց» աշխատությունը թղթօգտագործման առումով հիմնականում ենթարկվում է վերոնշյալ օրինաչափություններին: Հարցն այն է միայն, որ այստեղ գրեթե չեն պահպանվել ամբողջական թղթեր, դրանք հիմնականում ներբերված են հատվածականորեն, երբեմն վերապատմվում են, իսկ շատ դեպքերում էլ պարզապես հիշատակվում է թղթի ուղարկման կամ ստանալու փաստը: Ամբողջությամբ չներբերվելու պարագան, բնականաբար, հանգեցրել է այն բանին, որ Դավրիժեցու պատմագրքի թղթային ընդմիջարկումները ժանրային ամբողջականության առումով տարտղնված են: Այդ հանգամանքը եթե մի կողմից խանգարում է ամբողջական պատկերացում կազմել 16-17–րդ դարերի թղթի կառուցվածքային ու բովանդակային

---

4 ***Մովսես Խորենացի,*** Հայոց պատմություն, Երևան, 1981, էջ 465, տե՛ս 35-րդ ծանոթագրությունը:

5 ***Աշոտ Ալեքսանյան,*** Հայ միջնադարյան նամակը (IV–XIV դարեր), Երևան, 1997, էջ 161: